



ԱՎԱԴԵՄԻԿՈՍ Ս. ՄԱԼԽԱՍՅԱՆԸ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԼԱՌԻՐԵԱՏ



կանավոր հայադեռ Ստեփան Մալխասյանը իր «Հայերեն բացատրական բառարան» քառահատոր խոշոր աշխատության համար օրերս արժանացավ Ստալինյան մրցանակի լավագույն բարձր կոչմանը։

Ս. Մալխասյանը ծնվել է Ախալցխայում 1857 թ. հոկտեմբերի 25-ին (հ. տ.) արհեստավորի ընտանիքում. հայրը դերձակ էր։

գրքագ) հայագիտություն սովորելու համար 1878 թվի աշնանը Մալխասյանը Պետերբուրգ գալով մտնում է համալսարանի Արեւիկյան լեզուների ֆակուլտետը՝ Հայ-սանսկրիտ բաժանմունքը որպէս ազատ ունկընդիր։ 1881 թվին տեղափոխւեալ և անհատական ալլ պատճառներով նու ստիպւած է լինում առժամանակ թողնել համալսարանը և զբաղվել միայն գրականութեամբ։



Ակադեմիկոս Ս. Մալխասյան

Սկզբնական կրթությունը ստացել է Ախալցխայի Կարապետյան ծխական դպրոցում և ապա գավառական դպրոցում, որն ավարտել է 1874 թվին։

1874 թվին էջմիածնում բացվում է Գեղորգյան ճեմարանը. հենց այդ թվականին էլ Մալխասյանն ընդունվում է նորաբաց ճեմարանը։

1878 թվին էջմիածնի հաշվին նա գործուղվում է Պետերբուրգ (Լենին-

1887 թվին էկստերն քննություն տալով ստանում է հասունության վկայական և նորից մտնում Պետերբուրգի համալսարանը՝ Հայ-Վրացական բաժանմունքը։ 1889 թվին քննութեամբ ավարտում է համալսարանը, ստանալով կանդիդատի աստիճան ու վերադառնում հայրենիք։ Մալխասյանը դասընկերն է եղել նշանավոր լինգվիստ Ն. Մառի։ Հայրենիքում երկար տարիներ Մալխասյանը զբաղվում է մանկավարժական աշխտ-

տանքով՝ վարելով ուսուցչական և տեսչական պաշտոններ։ Ախալցխայի երկսեռ ծխական դպրոցներում—1 տարի, Թիֆլիսի ներսիսյան դպրոցում—20 տարի, Թիֆլիսի Հովնանյան դպրոցում—4 տարի, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում—1 տարի, Թիֆլիսի Գայանյան դպրոցում—2 տարի, Լենինականի նորաբաց «Համալսարանում» 1—տարի և Ախալցխայի գիմնազիայում—1 տարի։ Այս 30 երկար ու ձիգ տարիների ընթացքում նա անխոչ աշխատել է իր աշակերտների մեջ սեր զարթնեցնել դեպի մայրենի խոսքը։

Մանկավարժական աշխատանքին զուգընթաց Մալխասյանը շարունակում է զբաղվել գրական-հայագիտական աշխատանքներով, հարստացնելով հայագիտությունը նորանոր բանասիրական ուսումնասիրություններով։

Նա իր ողջ կյանքը նվիրել է մայրենի լեզվի, գրականության-մատենագրության ուսումնասիրությանը։ Նրա գրական աշխատությունների թիվը մեծ է։ Այդ աշխատությունների թվին են պատկանում դասագրքեր, թարգմանություններ, հին հեղինակների հրատարակություններ, բանասիրական ուսումնասիրություններ։

Դասագրքերից հիշատակության արժանի են՝ «Դրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները», «Դրաբարի համաձայնությունը», «Դասընթաց հայոց հին մատենագրության» (վիմատիպ)։

Թարգմանություններից՝ «Բռնի միութուն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցույն Հոռմայ»—գրաբար։ Շեքսպիրից թարգմանել է «Լիր թագավոր», «Մակբեթ», Էսքրսից՝ «Մարդ եմ»։ «Սեբեդոսի պատմությունը» և «Սիմեոն կաթողիկոսի Զամբը» թարգմանել է ռուսերեն։ Խորենացու և Փավստոսի պատմությունները թարգմանել է գրաբարից աշխարհագրաբար։

Հին հեղինակներից հրատարակության է պատրաստել ու հրատարակել—Ասողիկի, Ղևոնդի, Ղազար Փարպեցու, Սեբեդոսի, Ամիր-Դովլաթի (Օգուտ բժշկության) աշխատությունները։

Բանասիրական ուսումնասիրություններից հիշատակենք «Ուսումնասիրություն փալստոս Բիւզանդացու», «Սեբեդոսի պատմությունը և Մովսէս Խորենացի», «Խորենացու առեղծվածի շուրջը», այս վերջին աշխատության մեջ քերթողահոր ժամանակը վերջնականապես որոշվում է V դարը։ ճշտվում է նաև, որ Խորենացու ողբի առաջին մասնին իրենն է, իսկ երկրորդ մասը կրցված է նրան Քաղկեդոնի ժողովից հետո։

Բացի առանձին գրքուկներով լույս տեսած աշխատություններից՝ Մալխասյան

ունի բազմաթիվ հոդվածներ՝ տպագրված պարբերական մամուլում։ Նրան է պատկանում նաև նախաձեռնությունը և ընդհանուր հսկողությունը «Պատմագիրք Հայոց» հրատարակության։

Սակայն նրա աշխատությունների մեջ անզուգականը և գլուխ գործոցը հանդիսանում է նրա «Հայերեն բացատրական բառարան» ստվար աշխատությունը, որը եզակի տեղ է գրավում մինչ օրս լույս տեսած բոլոր հայերեն բացատրական բառարանների շարքում՝ իր ճոխ ու հարուստ բովանդակությամբ և գիտական մշակման մեթոդաբանությամբ։

Այս բառարանում ղեկավարած են շուրջ 120.000 հայերեն բառեր, որոնց թվում մինչև այժմ հայտնի բոլոր գրաբար բառերը, բառարաններում հիշատակված աշխարհագրական գրական լեզվի և բառարանների բառերը, նաև հեղինակին հայտնի բոլոր բառաբանային բառերը։ Այս մեծ աշխատությունը ամենակատարյալն է բոլոր հայերեն բառարանների մեջ։ Նա իր ծավալով անգամ գերազանցում է բոլոր հայերեն բառարաններին միասին վերցրած և Խաչմում է 520 տպագրական մամուլ։

Հեղինակը բառարանում նշում է յուրաքանչյուր բառի ծագումը, զուտ հայկական լինելը կամ որ ժողովրդի լեզվից փոխ առնված լինելը և նրա զարգացումը։ միաժամանակ ցույց է տալիս նրա գրաբար, աշխարհագրական և բառաբանային լինելը։ Հեղինակն աշխատել է յուրաքանչյուր բառի նշանակությունը տալ լրիվ կերպով, սկսելով ամենահինից մինչև նոր նշանակությունները։

Առանձնապես ուշադրության արժանի է հեղինակի այն մեթոդը, որ օտարազգի բառերի դիմաց ոչ միայն նշում է այն լեզուն, որից փոխ է առնված տվյալ բառը, այլև այն լեզուն, որի միջնորդությամբ հայերենին է անցել այդ բառը։ Այս միջոցով հեղինակը ցույց է տվել հայերենի այս կամ այն ազգից կրած կուլտուրական ազդեցությունը։ Բառարանակազմության այս մեթոդաբանական հանդիսանում է բառարանի ամենաարժեքավոր կողմերից մեկը։

120 հազար բառ... ինչպիսի քրտնաջան աշխատանք է թափել անուանի լեզվաբանը այդ բառերը հավաքելու, գիտականորեն ուսումնասիրելու և բացատրելու վրա։ Յուրաքանչյուր բառի ճշտումը, մանրակրկիտ անալիզը կատարելու և նրա ծագումն ու զարգացումը ցույց տալու համար արհեստ գիտնականը թափանցել է դարերի խորքը, թերթել հին ու նոր ժամանակների գրականությունը՝ սկսած տառերի գյուտից

մինչև մեր օրերը. վաղուց մոռացված, «մեռած» շատ բառերի վրայից դարերի փողին խթանելով լույս աշխարհ է բերել նրանց. անդադրում ուսումնասիրել է բառապաշարը:

Բառարանում կարող ենք գտնել անցյալ ժամանակների բառերը, սկսած հնթանոսական ժամանակների, 5-րդ դարու, մեր նախահայրերի, պապերի գործածած բառերից և վերջացրած արդի հայերենով. այս բոլորն իրենց արտահայտությունն են գտել այդ տիտանական աշխատության մեջ: Բառեր կան, որոնց բացատրությունը էջեր են դրադենցում և ամենայն իրավամբ անջատ աշխատություններ կարող են համարվել:

Նրկար տարիներ մեծանուն հայագետը ժամերով գրասեղանի առաջ տքնել է գիտնականի համառության, ստեղծագործողի ոգևորության կերտելով վարպետորեն այս հոյակապ երկը:

Տաղանդավոր գիտնականը իր այս գործով հավերժացրել է իր անունը. դարեր կանցնեն և գալիք սերունդները սիրով կդիմեն նրա բառարանի օժանդակությանը:

Ս. Մալխասյանը իր հասակակիցների մեջ ամենաերջանիկը հանդիսացավ, որով-

հետև նրա բեղմնավոր աշխատանքի համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին միայն սովետական պայծառ արևի ներքո:

Չնայած իր 89-ամյա տարիքին, Մալխասյանն այսօր էլ դեռ երիտասարդական ավյուճով շարունակում է աշխատել և իրեն բավականաչափ առույգ է զգում: Համակրելի դիմագծերով ծերունին կարդում է առանց ակնոցների գործածելու:

Ս. Մալխասյանը ծրագրել է ընթացիկ տարում տպագրության հանձնել Փավստոս Բյուզանդի աշխարհաբար թարգմանությունը ընդարձակ առաջաբանով ու ծանոթություններով և «Սիմէօն կաթողիկոսի Ջամբուր»-ի ռուսերեն թարգմանությունը նույնպես առաջաբանով ու ծանոթություններով: 1947 թվին մտադիր է տպագրության հանձնել 140 առածների և ավանդությունների ժողովածուն Ախալցխայի բառարանով: Կցելով նրան համառոտ բառարան: Մտադիր է գրելու նաև իր կենսագրական հիշողությունները: Ներկայումս գրում է — Դիտողություններ Մ. Աբելյանի «Հայոց հին գրականության պատմության մասին» բանասիրական հոդվածը:

